Ծուշանիկ Կուրղինյան

Գիշերը 4

Քնած է երկիր . . . վիշտը մրափում՝
Հոգնած թևերը սև կրծքին խաչած,
Նրա ոռնոցով էլ չի մորմոքում,
Չարքաշ մարդկության ուղեղը հոգնած:

Թմրած է քաղցը . . . ու չի քրքրում
Օրերով դատարկ վատուժ ստամոքս,
Կուշտն ու քաղցածը մայր հողի գրկում,
Հավասար քնով քնած են անհոգս:

Միայն ծերունի Մորփեն աչալուրջ
Նստած է արթուն աշխարհի վրա .
Երջանիկ երազ, ցնորք ու անուրջ,
Թափում մրափող մտքին անխնա:

Եվ երազում են . . . երջանիկ ժպիտ
Մեղմ գալարվում է քնած դեմքերից .
Նրա, որ ամբողջ կյանքն է արհավիրք,
Նրա, որ գանգատ չունի իր բախտից:

1906 թ .